
ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՀԱՅԱԳԵՏՈՐ
(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Շահենի Հովհաննիսյանի
ծննդյան 70-ամյակի առթիվ)

Գիտության ճանապարհին ընտրելը Լավրենտի Հովհաննիսյանի թերևս ամենահամարձակ, բայց և ամենաճիշտ քայլն է եղել՝ որքան դժվար, նույնքան էլ պատվաբեր: 1968 թ.



Երևանի պետական համալսարանի շրջանավարտ Լ. Հովհաննիսյանն ընդունվել է ՀՀ ԳԱ լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի ասպիրանտուրան (մասնագիտությունը՝ «Հայոց լեզվի պատմություն»): Ասպիրանտական տարիներին, ժամանակակից օտար լեզուներից ու մասնագիտական դասընթացներից բացի, ուսումնասիրել է լատիներեն և հին հունարեն: Լինելով պրոֆ. Վարազ Առաքելյանի ասպիրանտը՝ նա այդ տարիներին հիմնավոր գիտելիքներ է ձեռք բերել նաև գրաբարից: Բնավ պատահական

չէ, որ նրա թեկնածուական ատենախոսության թեման («Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը»), որի հրապարակային պաշտպանությունը հաջողությամբ տեղի ունեցավ 1972-ին, հենց գրաբարից է:

Առանց վարանելու կարող ենք արձանագրել, որ Լավրենտի Հովհաննիսյանի՝ 4 տասնամյակից երկար ձգվող գիտական գործունեության բուն թեմատիկ առանցքը հայոց լեզվի պատմությունն է, մասնավորապես՝ հին հայերենը: Ասվածի մասին լավագույնս վկայում է այն փաստը, որ Լ. Հովհաննիսյանի՝ թվով 80-ը գերազանցող մենագրություններից և հոդվածներից առնվազն 50-ի մեջ քննության նյութ են դարձել գրաբարին առնչվող հարցեր:

Հատկանշական է, որ նրա առաջին չորս հոդվածներն ու մենագրությունը կարելի է համարել գրաբարի քերականության ավանդական ուսումնասիրություններ, մինչդեռ նույն բանը չենք կարող ասել մյուս ուսումնասիրությունների մասին, որոնցում հեղինակը դուրս է եկել հետազոտությունների նեղ արահետից և մտել մի ընդգրկուն ճանապարհ, որտեղ արդեն տարբեր տեսանկյուններից հիմնականում ուսումնասիրության նյութ են դարձել գրաբարի բառապաշարի տարբեր շերտեր:

Այսպես XX դարի 70-ականներին երիտասարդ լեզվաբան Լ. Հովհաննիսյանն սկսել է իր գիտական գործունեությունը (առաջին գիտական հոդվածը՝ «Առաջին և երկրորդ ապառնիները դասական հայերենում» լույս է տեսել 1971-ին), իսկ արդեն XXI դարում մեզ է ներկայանում «Գրաբարի բառապաշարը (V դար)» (2006 թ.) և այլ ծավալուն աշխատություններով:

«Գրաբարի բառապաշարը (V դար)» արժեքավոր գործում հեղինակը քննության է առել V դարի գրաբարի բառապաշարը՝ ըստ ծագումնաբանական շերտերի՝ առանձնացնելով բնիկ և փոխառյալ (իրանական, ասորական, հունական փոխառություններ) տեսակները, ապա անդրադարձել է նվազ հաճախական բառերին, առանձին հեղինակների առաջին կամ միակ վկայություններին, բարեխղճորեն համեմատել դրանց ձեռագիր և տպագիր տարբերակները, քննության առել բառային ու բառակազմական տարբերակները և այլն: Սակայն ամենակարևորն այն է, որ այս մենագրության մեջ Լ. Հովհաննիսյանն առանձնացնում է «Նոր Հայկազյան բառարանում» և գրաբարի բառարաններում չավանդված բազմաթիվ բառեր նույնպես, որոնք վկայում են հեղինակի կողմից կատարված մանրակրկիտ աշխատանքի մասին:

Հայոց լեզվի պատմության շրջանակներում Լ. Հովհաննիսյանը խորությամբ զբաղվել է նաև գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննությամբ: «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն» երկհատորյակում (2008 և 2012 թթ.) նա առանձնացրել է գրաբարի բառապաշարի մի քանի իմաստային խմբեր (օրինակ՝ «Ժամանականիշ բառեր») և ենթախմբեր (օրինակ՝ «Օր և օրվա ժամանակահատվածներ», «Շաբաթ և շաբաթվա օրեր», «Ամիս, ամսանուններ», «Տարի»), վեր հանել այդ խմբերում ներառված միավորների իմաստային-գործառական յուրահատկությունները, բնիկ ու փոխառյալ բառերի հարաբերակցությունը և այլն:

Հայոց լեզվի պատմության սահմաններում Լ. Հովհաննիսյանն ուսումնասիրության նյութ է դարձրել նաև V դարի թարգմանական գրականության բառապաշարը՝ քննության առնելով Եվսեբիոս Եմեսացու, Հովհան Ոսկերեբանի, Եվսեբիոս Կեսարացու, Փիլոն Եբրայեցու երկերի և «Նորագյուտ Գիրք մնացորդաց»-ի գրաբար թարգմանությունների լեզվաոճական առանձնահատկությունները [«Հայ թարգմանական գրականության բառապաշարը (V դար)» (2007 թ.)]: Բարձր գնահատելով «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» և «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» կոթողային գործերի հեղինակների, նաև Արիստակես Վարդանյանի, Նորայր Բյուզանդացու և Հրաչյա Աճառյանի՝ բառահավաքության հարցում թողած նշանակալից ավանդը՝ Լ. Հովհաննիսյանը երկար տարիներ (շուրջ 25 տարի) զբաղվել է նշված աշխատանքով: Ասվածի մասին են վկայում 1987 թ. և դրանից հետո լույս տեսած մի

շարք հոդվածներ [*«Նորահայտ բառեր հայ մատենագրության մեջ»* (1987 թ.), տե՛ս նաև բառաքննական մի շարք դիտարկումներ (1989, 1997, 2000, 2013 թթ.) և այլն], որոնցում քննվում են բազմաթիվ նորահայտ բառեր: Արդյունքում լույս են տեսել մենագրություններ [*«Նյութեր պատմական բառարանագրության»* (2001 թ.), *«Գրաբարի բառարանագրության և բառագիտության հարցեր»* (2009 թ.), *«Գրաբարի բառարան, նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր»* (2010 թ.)], որոնցից վերջինը ներառում է շուրջ 5.500 բառային միավոր: Գնահատելին, սակայն, միայն սա չէ, այլև այն, որ Լ. Հովհաննիսյանը տվել է գրեթե բոլոր նորահայտ բառերի իմաստները, վերանայել մի շարք բառերի՝ այլ լեզվաբանների կողմից ամրագրված իմաստները՝ առաջարկելով իր տարբերակը, կամ եղած իմաստների կողքին բերել նորը՝ անշուշտ, հիմնավորված բնագրային համոզիչ փաստերով:

Մրանից բացի՝ Լ. Հովհաննիսյանի կողմից քննության առարկա են դարձել նաև *«Նոր Հայկազյան բառարանում»* չվկայված, բայց գրաբարի որևէ բառարանում առկա մի շարք բառեր:

Բառահավաքչական աշխատանքը Լ. Հովհաննիսյանի համար նպաստավոր հոդ է ստեղծել՝ զբաղվելու նաև ստուգաբանական աշխատանքով [*«Ստուգաբանական նկատառումներ»* (2001 թ.), *«Հայ-իրանական նոր ստուգաբանություններ»* (2005 թ.), *«Հայ-իրանական նոր ստուգաբանություններ»* (2006–2007 թթ.)]: Այստեղ լեզվաբանը հանդես է բերում գիտական զգուշավորություն՝ հնարավորինս հիմնավոր, այն է՝ անսխալ ներկայացնելու մի շարք բառերի ծագումնաբանությունը, վերանայելու ստուգաբանված որոշ բառերի իրական ակունքները:

Երկրորդ հիմնական ուղղությունը, որով ընթացել է Լ. Հովհաննիսյանի ստեղծագործական ուղին, հայ-իրանական լեզվական առնչություններն են (թեմայի ընտրությունը պատահականություն չէ. 1967 թ. Լ. Հովհաննիսյանն ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի իրանագիտության բաժինը): Այս դեպքում նրա գիտական հետազոտությունների համար փաստական նյութ են ծառայել իրանական փոխառությունները, որոնց առնչությամբ, սկսած 1981 թվականից, նա պարբերաբար լույս է ընծայել մի շարք հոդվածներ [*«Իրանական փոխառություններ համարվող մի քանի բառերի շուրջ»* (1981 թ.), *«Հայերենի իրանական փոխառությունների մասին»* (1983 թ.), *«Հայերենի իրանական փոխառություններ տարբերակման վերաբերյալ»* (1984 թ.), *«Հայ-իրանական զուգադիպումներ»* (1988 թ.) և այլն]: Ըստ էության, այդ հոդվածները արտացոլումներն են Լ. Հովհաննիսյանի՝ *«Հայերենի իրանական փոխառությունները»* թեմայով դոկտորական ատենախոսության, որը նա հաջողությամբ պաշտպանեց 1995 թ.՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Իրանական փոխառությունների թեման հետազայում ևս շարունակել է հետաքրքրել Լ. Հովհաննիսյանին, և նա ժամանակ առ ժամանակ հանդես է եկել նոր ուսումնասիրություններով [«Իրանական արմատների դրսևորումները հայերենում» (1993 թ.), «Պարսկերեն բառերի ստուգաբանությունները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (2012 թ.) և այլն], ապա մենագրությամբ անդրադարձ կատարել նաև Հ. Աճառյանի՝ իրանական փոխառությունների քննությանը [«Իրանական փոխառությունների քննությունը Հ. Աճառյանի աշխատություններում» (2013 թ.)]:

Լ. Հովհաննիսյանին հետաքրքրել են նաև պատմական բարբառագիտության որոշ հարցեր: Լինելով բնիկ արցախցի (ծնվել է 1944 թ. փետրվարի 12-ին Արցախի Մարտունու շրջանի Նորշեն գյուղում)՝ նա առանձնակի ներշնչմամբ է գրել իր հայրենի եզերքի՝ Արցախի բարբառին առնչվող հետազոտությունները: Մի դեպքում համեմատական քննության նյութ են դարձել հեղինակի հայրենի բարբառի և գրաբարի լեզվական իրողությունները («Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջ», 1975 թ.), այլ դեպքերում դիտարկվել են Արցախի բարբառում տեղ գտած հնաբանություններն ու իրանական որոշ փոխառություններ՝ «Բարբառային հնաբանություններ Ղարաբաղի բարբառում» (1979 թ.), «Ղարաբաղի բարբառում իրանական մի քանի փոխառությունների մասին» (1990 թ.), «Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագույն շերտերը» (2000 թ.):

Վերը նշված բնագավառներով չի սահմանափակվում Լ. Հովհաննիսյանի բանասիրական պրպտումների շրջանակը: Ժամանակ առ ժամանակ նա մասնակցել է դպրոցականների և շրջանավարտների համար նախատեսված շտեմարանների ու հարցարանների կազմման աշխատանքներին (1997–1998 թթ.), աշխատակցել «Հայկական Սովետական Հանրագիտարանին»՝ հեղինակելով որոշ բառահոդվածներ՝ «Լատինաբան հայերեն» (1978 թ.), «Հակոբ Կարնեցի» (1980 թ.), արձագանքել հայոց լեզվին վերաբերող հրատապ հարցերին («Ուղղագրական հետդարձը ժամանակավրիպություն է» (1997 թ.), գրախոսել մենագրություններ [«Արժեքավոր աշխատություն» (գրախոսություն Վ. Առաքելյանի «Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար)» գրքի մասին), 1981 թ., «Հայերենի բարբառներին նվիրված նոր ուսումնասիրություն» (գրախոսություն Հ. Խաչատրյանի «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում» գրքի մասին), 2009 թ.):

Տպագրված մենագրություններից և հոդվածներից բացի՝ Լ. Հովհաննիսյանն ընդդիմախոսել է տասնյակ թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ:

Գիտական գործունեությանը զուգահեռ՝ Լ. Հովհաննիսյանը կատարում է դասախոսական աշխատանք՝ մայրաքաղաքի բուհերում դասավանդելով գրաբար և ժամանակակից հայոց լեզու: 2007 թ. նրան շնորհվել է «Լեզվաբանության պրոֆեսորի» գիտական կոչում:

Դեռ երիտասարդ տարիներից Լ. Հովհաննիսյանը կատարել է նաև վարչական աշխատանք. 1995–2006 թթ. նա ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պաշտոնավարել է որպես փոխտնօրեն, 2006–2011 թթ.՝ զբաղեցրել է նույն ինստիտուտի տնօրենի պաշտոնը: Եթե իր գիտական գործունեությամբ նա հիշեցնում է Վարազ Առաքելյանին, ապա վարչական աշխատանքում ՀՀ ԳԱԱ ակադ. Գևորգ Զահուկյանի հետևորդն է:

2010 թվականից Լ. Հովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ է: Իրոք, նկատելիորեն լայն է բազմավաստակ հայագետի ուսումնասիրությունների շրջանակը (հայոց լեզվի պատմություն, պատմական բարբառագիտություն, V դ. թարգմանական գրականության լեզվի քննություն, ստուգաբանություններ, հայ-իրանական լեզվական առնչություններ, գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն և այլն), և նկատելիորեն բեղուն է նրա գրիչը (հեղինակել է 14 մենագրություն և շուրջ 70 հոդված):

Այժմ Լ. Հովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում զբաղեցնում է առաջատար գիտաշխատողի պաշտոն:

Հ. Գ.

1980 թ. Լ. Հովհաննիսյանը լույս ընծայեց «Բազմավաստակ հայագետ» վերտառությամբ հոդվածը՝ նվիրված իր թեկնածուականատենախոսության գիտական ղեկավարի՝ պրոֆ. Վարազ Առաքելյանի ծննդյան 70-ամյակին: Անցել է 34 տարի, կատարվել է սահուն սերնդափոխություն (ավելին՝ սանը իր ձեռքբերումներով գերազանցել է ուսուցչին), ինչն էլ մեզ իրավունք է վերապահում այս հոդվածի համար ևս ընտրել նույն վերնագիրը՝ «Բազմավաստակ հայագետ»:

Գիտությամբ զբաղվող ամեն մարդ չէ, սակայն, որ համարվում է բազմավաստակ: Գիտնականը բազմավաստակ է ոչ միայն անշունչ, այլև շնչավոր արտադրանքով՝ իր աշխատություններով և գիտության ասպարեզ մտած սաներով: Լ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի են արժանացել մեկ տասնյակից ավելի ասպիրանտ և հայցորդ: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ. Հովհաննիսյանը բազմավաստակ գիտնական է:

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ